



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

„ 21 „ հունվարի 2014թ.

N 14

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԵՎԱՆ
ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՋԳԵՆ ՆԱՐՆԲԵԿԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 226-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392 -Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 68-րդ կետի 15-րդ ենթակետի պահանջը խախտելու համար «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վանևան գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վազգեն Նարնբեկի Քոչարյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «Նկատողություն»:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ